Դանիել Վարուժան

Ճանապարհ խաչի

Ո՛վ մատնըված Հիսուս,
Դու որ փըշապատ գըլուխ մ'ունեցար՝
Գըթա՛ իմ գըլխուս.
Դերաներդ զայն քարկոծեցին հար
Եկեղեցիին սալաքարերով:
Վերքերես բըղխող ըղեըղ կերան
Իշամեղուներն ամբարըշտության:
Տե՛ս, մազերուս վրա եղյամն է նըստեր.
Ես շա՜տ եմ տանջվեր:

Տառապա՛ծ Հիսուս,
Դուն որ ունեցար արտասվող աչքեր՝
Գըթա՛ աչքերուս.
Անոնք ավելի արտո՛սր են քամեր
Քան թե խըմեր լույս: Դագաղներու վրա
Միշտ մահն են հըսկեր մոմերու հետ շեջ
Բիբերս են ընկեր վիշտի հորի՛ն մեջ:
Տե՛ս, կոպերուս վրա աճյուն է ցանվեր.
Ես շա՜տ եմ տըքներ:

Ապտակվա՛ծ Հիսուս,
Դուն որ ունեցար ձեռքեր կալ ու կապ…
Գըթա՛ ձեռքերուս.

Ափերս են տաղեր պայտերով հրատապ,
Եվ մատվրներս, ըստինքներու նման
Արյունս են կթեր: Դաստերս ճաթած են
Կըրելեն երկաթ, հողը փորելեն:
Տե՛ս, եղունգներըս սիրտս ե հոշոտեր.
Ես շա՜տ եմ խոցվեր:

Թըքնըվա՛ծ Հիսուս,
Դու որ ունեցար ձաղկըված կողեր՝
Գըթա՛ կողերուս.
Անոնք աղբյուսի վըրա են պառկեր՝
Եվ վիշտը քունեն ճանչցրեր հաղթական.
Բուծաներ են միշտ գըրկած Մահը կույր՝
Իրենց քա